

Պրոֆ. Վալտեր Դիլոյանն ընդդեմ պրոֆ. Վալտեր Դիլոյանի

Ս. թ. հունվարի 24-ին «Գոլոս Արմենիի» թերթում կարդացի պրոֆ. Վալտեր Դիլոյանի՝ «Փոքորիկ մի բաժակ ջրում» հոդվածը, ինչպես նաև «Հայոց աշխարհ» թերթին նրա տված հարցազրույցը հետևյալ խորագրով՝ «Տեղինակը պետք է լրջորեն վերանայի այդ գործը»։ Փետրվարի 24-ին նույն հեղինակի «Ոչնչից շատ աղմուկ» հոդվածը հրապարակվեց նաև «Ազգ»-ում։

Միանգամից պետք է ասեմ, որ և հոդվածները, և հարցազրույցն ինձ տարակուսանքի մեջ դրեցին։ Բանն այն է, որ ես ներկա էի Արմեն Այվազյանի «Հայոց եկեղեցին ԽVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» դոկտորական ատենախոսության պաշտպանությանը, որի մասին էլ խոսում են Վ. Դիլոյանի հոդվածն ու հարցազրույցը։ Եթե ես ներկա չկանութիւնում էլ դրան, ապա գուցե ուշադրություն էլ չդարձնեի այդ հրապարակումների վրա։ Ի՞նչ կա որ, հարգարժան պատմաբան պրոֆեսորը՝ պատմական գիտությունների դոկտորը, Արմեն Այվազյանի ատենախոսության պաշտպանության երեք պաշտոնական ընդդիմախոսներից մեկը հերքում է ինչ-որ «պատվիրված թերթային գրչակների» հերյուրանքները։ Մեր ժամանակներում դրանով ոչ ոքու չես զարմացնի։

Իսկ ու՞ն մասին է առհասարակ խոսքը։ Գուցե հայցորդը գիտության մեջ փողոցից հայտնված մի կիսագրագետի մե՞կն է կամ մի ինչ-որ փողատե՞ր, որն ինքնահաստատվելու ցանկությամբ որոշել է գիտական աստիճան ձեռք բերել։ Ո՛չ, խոսքը կայացած գիտնականի մասին է, գիտնականի, որը կատարելապես տիրապետում է երեք լեզուների, ժամանակակից գիտական ապարատին, հեղինակ է յոթ մենագրության, մոտ 40 գիտական հոդվածների ու մի շարք թերթային հրապարակումների, համատեղում է Մատենադարանում իր գիտական աշխատանքը՝ ԵՊՀ-ուն և Ամերիկյան համալսարանում ռազմական պատմություն և քաղաքագիտություն դասախոսելու հետ։ Վերջինում՝ անգլերեն լեզվով։

«Հայոց աշխարհ»-ին տված հարցազրույցում պրոֆ. Դիլոյանը հայտարարում է, որ ատենախոսությունը «դեռևս հում է», «ենթակա է վերանայման» և առհասարակ արժանի չէ դոկտորական աստիճանի։ «Գոլոս Արմենիի»-ի իր հոդվածում պրոֆ. Դիլոյանը, մասնավորապես, գրում է. «Իմ քննադատական դիտողությունները, որ շատ լուրջ էին, կազմում էին 8 էջ, քանի որ ես հերքում էի ատենախոսության հիմնական դրույթների մի շարքը։ Եթե ես միայն դրական էի խոսում աշխատանքի մասին, ապա ինչու՞ ատենախոսը գրեթե կես ժամ պատասխանում էր ինձ, իհարկե,

իր սովորության համաձայն, փորձելով հերքել նաև այն, ինչն ակնհայտ էր: Ել ինչպես կարելի է խոսել միայն «դրական» կարծիքի մասին: Նույն սուտն, առանց տատանումների, գրում են Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Սեն Արևշատյանը և Մատենադարանի Գիտական խորհրդի նախագահ Վարդան Գրիգորյանը...»: Շատ լուրջ մեղադրանքներ են: Եվ ոչ միայն ծախուր թերթային գրչակների, այլև հարգված գիտնականների հասցեին: Նրանցից մեկն ակադեմիկոս է համաշխարհային անվանք գիտնական, մյուսը՝ պատմական գիտությունների դոկտոր՝ գիտական կոչումներ շնորհող տվյալ Մասնագիտական խորհրդի այն ընդամենը մի քանի անդամներից, որոնք պաշտպանվող ատենախոսության թեմայի ներ մասնագետ են:

«Ազգ» թերթում Վ. Դիլոյանը անում է մի շարք լրացուցիչ դիտողություններ, որոնց, սակայն, ատենախոսը հանգամանալիորեն պատասխանել է իր ատենախոսության պաշտպանության ընթացքում՝ 2003 թ. դեկտեմբերի 9-ին: Չլինելով պատմաբան՝ ես չեմ պատրաստվում խոսել պաշտպանության ժամանակ տեղի ունեցած գիտական վեճի բովանդակային մասին: Բայց հարցի մեթոդական մասին ես ծանոթ եմ բավականին լավ, տարբեր կարգավիճակներով մասնակցել եմ, հավանաբար, ավելի քան հարյուր ատենախոսության պաշտպանություններին:

Իհարկե, 8 էջ քննադատական դիտողությունները բավականին շատ է: Պրոֆ. Վ. Դիլոյանը զարմանում է, որ ատենախոսը կես ժամ պատասխանել է իրեն: Դա հասկանալի է, չէ՞ որ նա պատասխանել է ոչ թե գովաբանությանը, այլ հենց ընդդիմախոսի դիտողություններին, ներառյալ և նրան, «ինչն ակնհայտ էր» (ընդդիմախոսին): ճիշտ է, այդ պատասխաններից մեկը պրոֆ. Վ. Դիլոյանը, իր խոսքերով ասած, հերքեց իր երկրորդ ելույթի մեջ: Իսկ մյուսներին չպատասխանեց, «քանի որ արդեն ուշ էր և մթնոլորտը բավականին լարված էր» (?): Ի՞նչ է նշանակում «արդեն ուշ էր» և «մթնոլորտը լարված էր», դա ի՞նչ կապ ունի: Ընդդիմախոսը պարտավոր է սկզբունքային լինել: Ընդդիմախոսն ատենախոսի նկատմամբ կամ սկզբունքային է, կամ անսկզբունքային: Եվ ճիշտ այդպես էլ ատենախոսության մասին գրված կարծիքը կարող է լինել կամ դրական, կամ բացասական, անկախ նրանից, թե քանի էջի վրա են դիտողություններ արված: Ընդդիմախոսը կամ համարում է հայցորդին արժանի հայցած աստիճանին, կամ ոչ: Իսկ այն կարծիքը, որ կարդաց ընդդիմախոս Վ. Դիլոյանն, անկասկած, դրական էր: Նրանում ընդդիմախոսը, մասնավորապես, պնդում է. «ատենախոսությունն ընդգրկում է հայ եկեղեցու 17-18-րդ դարերի պատմությանն առնչվող խիստ կարևոր դրվագների մի ամբողջ համալիր, դրվագներ, որոնք ատենախոսը կարողացել է մեծ հմտությամբ շաղկապել միմյանց և հանգել բավական հիմնավոր և ինքնօրինակ

Եզրակացությունների»: Իսկ ավարտվում է կարծիքը հետևյալ բառերով, որոնք դահլիճում բոլոր ներկաները լսել են. «...Ամփոփելով մեր խոսքը, պետք է նշենք, որ ատենախոս **Ա. Մ. Այվազյանը** հետազոտել, քննարկել և վերլուծել է հիմնահարցեր, որոնք մեծ հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում 17-18-րդ դարերի հայոց պատմության հիմնախնդիրները ճշմարտորեն լուսաբանելու առումով: Ատենախոսը կարողացել է առաջարել և հիմնավորել մի շարք դրույթներ, որոնք նպաստում են նորովի լուսաբանելու մի շարք հիմնախնդիրներ: Այսու միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ **Պատմության իմստիտուտում** գործող **ԲՈՅ-ի 004** մասնագիտական խորհրդին շնորհելու ատենախոս **Արմեն Մարտինի Այվազյանին** իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը»:

Պրոֆ. Վ. Դիլոյանն սկսում է իր հոդվածը «Գոլոս Արմենիի» թերթում չակերտների մեջ վերցված բառերով, սակայն առանց հեղինակի՝ լրագրող Արսեն Ալթունյանի վրա հղում կատարելու (այսպես էր կոչվում 2003 թ. դեկտեմբերի 11-ի «Նովյե վլեմյա» թերթում նրա հոդվածը)՝ «Աննախընթաց պաշտպանության աննախընթաց տապալունը»: Իսկապես, այդպես էլ կա՞:

Բայց ի՞նչն է, այնուամենայնիվ, փոխվել այս մեկուկես ամսվա ընթացքում, որ պրոֆ. Վ. Դիլոյանն այժմ ստիպված է զբաղվել ինքն իր հերթումով:

**Նիկիտա Զարոբյան
Տեխնիկական գիտությունների թեկնածու**